

**ՂԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ)**

ԱՐԹՈՒՐ ՂԱՄՔԱՐՅԱՆ

Ժամանակակից իրավունքի տեսության հետազոտման արդիական ոլորտներից է իրավական քաղաքականությունը: Քանի որ դատաիրավական քաղաքականությունը դիտվում է որպես իրավական քաղաքականության տարատեսակ, ուստի «դատաիրավական քաղաքականություն» հասկացության բովանդակությունն ու առանձնահատկությունները բացահայտելու համար նախ ընդհանուր գծերով ներկայացնենք իրավական քաղաքականություն հասկացության վերաբերյալ առկա մոտեցումները, ապա փորձենք բացահայտել «դատաիրավական քաղաքականություն» հասկացության բովանդակությունը:

Ղատաիրավական քաղաքականությունը՝ որպես իրավական քաղաքականության տարատեսակ

«Իրավական քաղաքականություն» կատեգորիան գիտության մեջ նոր է: Մինչխորհրդային ժամանակաշրջանի ռուս իրավաբանները (Բ. Կիստյակովսկի, Ս. Մուրոմցև, Ն. Կորկունով, Գ. Շերշենևիչ և այլն) այն համարել են կիրառական գիտություն, որը կոչված է գնահատելու գործող օրենսդրությունը և մշակելու առավել կատարյալ իրավունք¹: Լ. Պետրաժիցկին նշում էր, որ իրավական քաղաքականությունը պատասխանում է իրավունքի զարգացման նպատակների և իդեալների վերաբերյալ հարցերին²:

Իրավական քաղաքականությունը ունի բարդ կառուցվածք և բովանդակություն: Այն կազմող բաղադրատարրերը իրենց նշանակությամբ, իրավաբանական բնույթով, հասարակական հարաբերությունների վրա ներգործության աստիճանով միատարր չեն: Իրավական քաղաքականությունը, որպես իրավաբանական կատեգորիա, արտացոլում է օրենսդրության սկզբունքները, դրանց իրականացման և կիրառման առանձնահատկությունները³: Սույն քաղաքականությունը կոչվում է իրավական, քանի որ. ա) հիմնված է իրավունքի վրա և կապված է իրավունքի հետ, բ) իրականացվում է իրավական մեթոդներով, գ) առավելապես ընդգրկում է գործունեության

¹ Стів Матузов Н. И. Общая концепция и основные приоритеты российской правовой политики // Правовая политика и правовая жизнь, 2000, № 11, էջ 32:

² Մեքերունն ըստ Ветютнев Ю. Ю. Развитие представлений о правовой политики в России. В кн.: Правовая политика России: теория и практика. М., 2006, էջ 133:

³ Стів Акимова Т. И. Правовая политика как элемент государственно-правового образования // Правовая политика и правовая жизнь, 2000, № 11, էջ 44:

իրավական ոլորտը, դ) անհրաժեշտության դեպքում հենվում է պետական հարկադրանքի վրա, ե) հանրային պաշտոնական քաղաքականություն է: Այլ կերպ ասած՝ իրավական քաղաքականությունը իրավական պետության կառուցման գործում հասարակության կառավարման առավել ընդունելի, ողջամիտ, արդյունավետ և քաղաքակիրթ միջոց է: Իրավական քաղաքականությունը պետական քաղաքականության դրսևորման հատուկ ձև է, երկրի քաղաքական կուրսի լեգիտիմացման, իրավաբանորեն ամրագրման և իրացման միջոց: Այն առաջին հերթին մարմնավորվում է Սահմանադրությունում, օրենսգրքերում և այլ իրավական ակտերում: Իրավական քաղաքականությունը հասարակության մեջ փոփոխություններ իրականացնելու գործուն միջոց է:

Զնայած իրավական քաղաքականության հետազոտման ոլորտում կատարված և կատարվող ակտիվ գիտական աշխատանքներին, այնուամենայնիվ այս հասկացության վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Ն. Մատուզովը իրավական քաղաքականությունը բնորոշում է որպես նպատակների, միջոցների, խնդիրների, ծրագրերի, դիրքորոշումների ամբողջություն, որոնք իրացվում են իրավունքի գործողության ոլորտում և իրավունքի միջոցով⁴: Ա. Մալկոն և Կ. Շուրնիկովը իրավական քաղաքականությունը համարում են պետական և համայնքային մարմինների գիտականորեն հիմնավորված, հետևողական և համակարգային կերպով իրականացվող գործունեություն՝ ուղղված իրավական կարգավորման արդյունավետ կառուցակարգերի ստեղծմանը, իրավական միջոցների քաղաքակիրթ օգտագործմանը⁵: Օ. Ռիբալովը նեղ իմաստով իրավական քաղաքականություն ասելով հասկանում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մարտավարության և ռազմավարության մշակումը և իրականացումը, իսկ լայն իմաստով՝ պետական և համայնքային մարմինների, հասարակական միավորումների գործունեությունը, որը ներառում է իրավական կառուցակարգերի գործառնությունն ապահովող գաղափարների, նպատակների, միջոցների և եղանակների համակարգը⁶: Հեղինակն իրավացիորեն իրավական քաղաքականությունը լայն իմաստով դիտում է որպես գործունեություն, որն իրականացվում է ոչ միայն պետական, այլ նաև ոչ պետական սուբյեկտների կողմից, սակայն չի հստակեցնում իրավական քաղաքականության նպատակային տեսանկյունը:

Վ. Բաբաևը նշում է, որ իրավական քաղաքականությունը իրավական կարգավորման մարտավարությունն ու ռազմավարությունն է⁷: Կարծում ենք՝ իրավական քաղաքականությունը անհրաժեշտ է ընկալել ավելի լայն իմաստով, քան սոսկ որպես իրավական կարգավորման մարտավարություն և ռազմավարություն: Պետք է համաձայնել, որ իրավական քաղաքականությունը երկրի իրավական զարգացման մարտավարությունը և ռազմավարությունն է, պետության համազգային միասնական քաղաքականությունը իրավունքի գործողության ոլորտում:

⁴ Տե՛ս **Матузов Н.** Правовая политика: сущность, концепция, реальность. В кн.: Российская правовая политика. Курс лекции. М., 2003, էջ 78:

⁵ Տե՛ս **Малько А. В., Шундикова К. В.** Правовая политика современной России: цели и средства // Государство и право, 2001, № 7, էջ 15-22:

⁶ Տե՛ս **Рыбаков О. Ю.** Правовая политика как юридическая категория. Журнал российского права, 2002, № 3, էջ 56:

⁷ Տե՛ս **Бабаяев В.** Теория современного права. Новгород, 1991, էջ 15:

Գրականության մեջ իրավական քաղաքականությունը սահմանվում է որպես իրավական ընթացակարգերի շրջանակներում և իրավունքի միջոցով հասարակության կառավարում⁸: Այս սահմանման հիմքում դրված է իրավական քաղաքականության համեմատ սեռային համարվող «քաղաքականություն» հասկացության առավել տարածված բնորոշումը, այն է՝ գործունեություն, որի նպատակը հասարակության կառավարումն է⁹:

Իրավական քաղաքականության հիմնական սուբյեկտը պետությունն է, որի անունից ձևավորվում և իրականացվում է իրավական քաղաքականությունը: Լևչենկովայի կարծիքով, պետության կողմից իրավական քաղաքականության ձևավորման և իրականացման հիմնական ձևերն են՝ օրինաստեղծ գործունեությունը, կիրառման ձևով իրավունքի իրացումը, արդարադատության իրականացումը, իրավախախտման համար իրավաբանական պատասխանատվության միջոցների կիրառումը¹⁰: Դժվար չէ տեսնել, որ գիտնականը որպես իրավական քաղաքականության իրականացման ինքնուրույն ձևեր տարանջատում է կիրառման ձևով իրավունքի իրացումը և արդարադատության իրականացումը: Առաջին հայացքից նման տարանջատումը կարող է անհիմն թվալ, քանի որ ընդունված է արդարադատությունը դիտել որպես իրավակիրառ գործունեության ձև: Սակայն, կարծում ենք, իրավական քաղաքականության ձևերի նման տարանջատումն արդարացված է, քանի որ ժամանակակից պայմաններում արդարադատությունը չի դիտարկվում լոկ որպես իրավակիրառ գործունեություն: Հաճախ դատարանների կայացրած ակտերի իրավական հետևանքները տարածվում են ոչ միայն դատավարության կողմերի վրա, այլև, դուրս գալով կոնկրետ գործի շրջանակներից, ձեռք են բերում համապարտադիր նշանակություն¹¹:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը ասվածը՝ կարելի է առանձնացնել իրավական քաղաքականության հետևյալ հիմնական հատկանիշները.

ա. իրավական քաղաքականությունը՝ որպես նպատակաուղղված գործունեություն, ձևավորում և իրականացնում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ինստիտուտները,

բ. պետության իրականացրած իրավական քաղաքականությունը օժտված է պետական-կամային բնույթով, ունի իշխանական-իմպերատիվ բովանդակություն,

գ. իրավական քաղաքականությունը այնպիսի գործունեություն է, որը

⁸ Տե՛ս **Левченкова Е. А.** Правовая политика государства и ее приоритеты в сфере правоохранительной деятельности органов внутренних дел: Теоретико-правовой аспект. Автореф. дисс. канд. юрид. наук. СПб., 2004, էջ 18:

⁹ Իրավական քաղաքականության հասկացության վերաբերյալ մոտեցումների մասին տե՛ս **Коробова А. П.** О многозначности понятия правовая политика // Правоведение, 1999, № 4, էջ 57:

¹⁰ Տե՛ս **Левченкова Е. А.** նշվ. աշխ.:

¹¹ Տե՛ս **Ղանբարյան Ա.**, Իրավունք և արդարադատություն (հարաբերակցության մեթոդաբանական ասպեկտը), «Իրավագիտության հարցեր», 2004, թիվ 1-2, **Սույնի՝** Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների նշանակությունը ստորադաս դատարանների համար, «Իրավագիտության հարցեր», 2003, թիվ 4, էջեր 42-51, **Սույնի՝** Դատական նախադեպի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Օրենք և իրականություն», 2006, թիվ 1, էջ 16-20:

կապված է իրավունքի, իրավաբանական ոլորտի հետ: Իրավական քաղաքականությունը առաջին հերթին կոչված է ղեկավարելու տվյալ երկրի իրավական զարգացման գործընթացները, բարձրացնելու իրավաբանական կեցության կազմակերպվածությունը, որոշակիությունը և կանխատեսելիությունը:

Դատաիրավական քաղաքականության բնորոշումը և սկզբունքները

Ինչ վերաբերում է դատաիրավական քաղաքականությանը, ապա տեսության մեջ այն նույնպես բնորոշվում է տարբեր կերպ: Տ. Սավյոլևան նշում է, որ դատաիրավական քաղաքականությունը արբիտրաժային դատարանների՝ օրենքով կարգավորված և արբիտրաժային դատավարության միջոցով իրականացվող դատավարական գործունեությունն է՝ քննելու և լուծելու ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեության այլ ոլորտի վեճերն ու գործերը, և ուղղված է խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանությանը¹²: Դատաիրավական քաղաքականության այս բնորոշումն ընդունելի չէ, քանի որ դատաիրավական քաղաքականությունը չի կարելի դիտարկել լոկ իրավական վեճերի լուծմանն ուղղված դատավարական գործունեություն: Դատաիրավական քաղաքականությունը որպես վեճերի լուծմանն ուղղված դատավարական գործունեություն ներկայացնելու պարագայում անհարկի նեղացվում է դատաիրավական քաղաքականության բովանդակությունը, և այն կարծես նույնացվում է բուն դատավարության հետ:

Սեկ այլ դեպքում դատաիրավական քաղաքականությունը բնորոշվում է որպես պետական և ոչ պետական կազմակերպությունների համակարգային, գիտականորեն հիմնավորված գործունեության հետևանքով ձևավորված հատուկ իրավաքաղաքական երևույթ, որն ուղղված է դատական համակարգի զարգացման ռազմավարության և մարտավարության որոշմանը, դատավարական և դատարանակազմական օրենսդրության կատարելագործմանը, դատական իշխանության գործառնության արդյունավետության ապահովման նպատակով դատական պրակտիկայի արդյունավետացմանը, իրավական և քաղաքացիական հասարակության կառուցմանը¹³:

Առավել ընդունված է դատաիրավական քաղաքականությունը բնորոշել որպես պետության, նրա մարմինների և պաշտոնատար անձանց, ոչ պետական ինստիտուտների և սուբյեկտների գիտականորեն հիմնավորված, հետևողական և համակարգային գործունեություն, որը կոչված է մշակելու արդարադատության կազմակերպման և գործունեության ոլորտում իրականացվող իրավական գաղափարներ: Դատաիրավական քաղաքականության էությունը դատական գործունեության ոլորտում գաղափարների, միջոցների, խնդիրների և ծրագրերի մշակումն ու գործնական իրականացումն է¹⁴:

¹² **Տե՛ս Савельева Т. А.** Судебно-правовая политика в сфере арбитражного судопроизводства. В кн.: Российская правовая политика. Курс лекций. М., 2003, էջ 466:

¹³ **Տե՛ս Киреев А. Б.** Судебно-правовая политика в современной России: Проблемы теории и практики. Автореф. дисс. канд. юрид. наук. Тамбов, 2009, էջ 8-25:

¹⁴ **Տե՛ս Терехин В. А., Афанасьев С. Ф.** Судебно-правовая политика. В кн.: Правовая политика России: теория и практика. М., Изд. "Проспект", 2006, էջ 311:

Դատաիրավական քաղաքականությունը նման ձևով է սահմանել նաև Դ. Սենիկինը¹⁵:

Այս բնորոշմանը ընդհանուր առմամբ համաձայն ենք, սակայն պետք է հաշվի առնել հետևյալ նկատառումները.

1. Կարծում ենք, որ դատաիրավական քաղաքականությունը ոչ միայն լոկ իրավական գաղափարների մշակմանն ուղղված գործունեություն է, այլև գործունեություն, որն ուղղված է դատաիրավական համակարգի տարբեր շերտերի (հնստիտուցիոնալ, դատավարական, նյութաիրավական) կատարելագործմանը, արդյունավետության բարձրացմանը:

2. Ընդունելի չէ այն, որ դատաիրավական քաղաքականությունը սահմանափակվում է միայն արդարադատության կազմակերպման և իրականացման ոլորտում իրավական գաղափարների մշակմամբ: Կարծում ենք, որ դատաիրավական քաղաքականության ոլորտը ընդգրկում է ոչ միայն արդարադատությունը, այլև դատական իշխանության մարմինների հետ գործառնական կապերի մեջ գտնվող այլ պետական մարմինների գործունեության և կազմակերպման ոլորտները:

Դատաիրավական քաղաքականությունը կարելի է բնորոշել որպես պետական իշխանության մարմինների, ոչ պետական կազմակերպությունների, գիտական հիմնարկների կողմից իրականացվող միջազգային չափորոշիչներից բխող և գիտականորեն հիմնավորված գործունեություն, որն առնչվում է դատաիրավական համակարգին, ուղղված է դատաիրավական ոլորտի իրավական գաղափարախոսության ձևավորմանը և դրա հիման վրա՝ դատաիրավական համակարգի, մասնավորապես դատական իշխանության իրականացման դատավարական-իրավական միջոցների կատարելագործմանը և կիրառման արդյունավետության բարձրացմանը:

Նշված բնորոշումից բխում է, որ դատաիրավական քաղաքականությունը ունի հարուստ բովանդակություն և ներառում է՝ *ինտելեկտուալ բաղադրատարր*, որը կոչված է ձևավորելու իրավական գաղափարներ, *կոմունիկատիվ բաղադրատարր*, որն իրենից ներկայացնում է դատաիրավական քաղաքականության տարբեր սուբյեկտների փոխհարաբերակցության համակարգը, *գործառնական (գործունեության) բաղադրատարր* և այլն:

Դատաիրավական քաղաքականությունը՝ որպես իրավական քաղաքականության տարատեսակ, մեկնաբանվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով: Օբյեկտիվ իմաստով դատաիրավական քաղաքականությունը դիտվում է որպես հասարակական հարաբերությունների ոլորտ, որը կախված չէ կոնկրետ սուբյեկտի կամքից, իսկ սուբյեկտիվ իմաստով՝ կամային դիրքորոշումների և վարքագծային գործոնների համակցություն, որը պայմանավորում է իրավաքաղաքական հարաբերությունների կոնկրետ սուբյեկտների գործունեության ուղղվածությունը և արդյունավետությունը:

Դատաիրավական քաղաքականության առաջնային ուղղությունը դատաիրավական ոլորտի նորմատիվ-իրավաբանական բազայի, դատավարական-իրավական միջոցների կատարելագործումն է, լիարժեք և արդյունավետ դատարանակազմական համակարգի ձևավորումը: Ասվածից չպետք է եզրակացնել, որ դատաիրավական համակարգը միայն

¹⁵ St u Семикин Д. С. Судебные акты в системе правовых актов современной России: общетеоретический аспект. Автореф. дисс. канд. юрид. наук. Саратов, 2008, էջ 27:

դատաիրավական քաղաքականության օբյեկտ է. այն միաժամանակ դատաիրավական քաղաքականության իրականացման միջոց է: Չէ՞ որ դատական իշխանության սուբյեկտները իրավունքի միջոցով արդյունավետորեն ներգործում են հասարակական հարաբերությունների վրա: Եթե դատաիրավական ոլորտի ինստիտուցիոնալ տարրերը (դատարաններ, դատավորներ և այլն) հանդես են գալիս որպես դատաիրավական քաղաքականության իրականացման սուբյեկտներ, ապա խոսքը դատական քաղաքականության մասին է¹⁶:

«Դատաիրավական քաղաքականություն», «դատաիրավական բարեփոխում» և «դատավարական-իրավական քաղաքականություն» հասկացությունների հարաբերակցությունը

Դատաիրավական քաղաքականության հետազոտման համար մեթոդաբանական նշանակություն ունի այս ոլորտի հասկացությալիս ապարատի վերլուծությունը: Տեսության մեջ քննարկվում է «դատաիրավական բարեփոխում», «դատաիրավական քաղաքականություն» և «դատավարական քաղաքականություն» հասկացությունների փոխհարաբերակցությունը: Ի. Մայդան, վերլուծելով վերը նշված հասկացությունները, իրավացիորեն նշում է, որ դատական բարեփոխումը համալիր միջոցառում է, որն առավելապես կազմակերպական բնույթ ունի և արդյունավետ դատավարական-իրավական քաղաքականության անբաժանելի մաս և նախադրյալ է: Ինչ վերաբերում է դատաիրավական քաղաքականությանը, ապա այն դատական բարեփոխումների հիմնադրույթների մարմնավորման առավել ինստիտուցիոնալիզացված ձևն է¹⁷: Դատաիրավական համակարգում իրականացվող բարեփոխումները պետության՝ դատաիրավական ոլորտում իրականացվող քաղաքականություն են¹⁸: Կարծում ենք, որ «դատաիրավական քաղաքականություն» և «դատաիրավական բարեփոխումներ» հասկացությունների միջև չպետք է անջրպետ դրվի, քանի որ հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում իրականացվող բարեփոխումներն ըստ էության որոշակի քաղաքականության իրականացում են:

Ինչ վերաբերում է դատաիրավական և դատավարական-իրավական քաղաքականությունների փոխհարաբերակցությանը, ապա այս կապակցությամբ տեսության մեջ նշվում է, որ դատաիրավական քաղաքականությունը բնութագրվում է որպես գիտականորեն հիմնավորված, համակարգային և ծրագրավորված գործունեություն, որն ուղղված է հիմնականում յուրիսդիկցիոն վարույթի կազմակերպական - կառուցվածքային և բովանդակային վերափոխման միջոցով արդարադատության և իրավապահ մարմինների գործառնության օպտիմալացմանը, իսկ դատավարական -

¹⁶ «Դատական քաղաքականություն» և «դատաիրավական քաղաքականություն» հասկացությունների հարաբերակցության խոր վերլուծությունը դուրս է սույն հոդվածի շրջանակներից:

¹⁷ **Տե՛ս Майдан И. А.** Процессуально-правовая политика современной России: проблемы теории и практики. Автореф. дисс. канд. юрид. наук. Саратов, 2009, էջ 21:

¹⁸ **Տե՛ս Метелкин С. И.** Институциональные инновации современной российской судебно-правовой политики. Автореф. дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2006, էջ 26, **Слободянюк И. П.** Судебная политика и судоустройство России в первой четверти XIX в. // Российская юстиция, 2005, № 4:

իրավական քաղաքականությունը ունի այլ ուղղվածություն՝ արդիակա-
նացնել ավանդական դատավարական իրավունքի ճյուղերը, կատարելա-
գործել դատավարական - իրավական դրույթները, մշակել դատավարա-
կան-իրավական հարաբերությունների ինքնուրույն հայեցակարգ, ինստի-
տուցիոնալիզացնել հասարակական հարաբերությունների վրա ներգոր-
ծող դատավարական-իրավական միջոցները, կատարելագործել դատա-
վարական-իրավական կարգավորման կառուցակարգերը և որոշել դրանց
արդյունավետության չափանիշները¹⁹:

Կարծում ենք՝ դատաիրավական և դատավարական-իրավական քա-
ղաքականությունները հարաբերակցվում են ինչպես ամբողջ և մաս: Դա-
տաիրավական քաղաքականության կարևորագույն բաղադրատարրերից է
դատավարական-իրավական միջոցների կատարելագործումը: Դատաի-
րավական քաղաքականության և դատավարական-իրավական քաղաքա-
կանության՝ որպես ամբողջի և մասի փոխհարաբերակցությամբ պայմա-
նավորված են նաև քաղաքականության այս ձևերի ընդհանրությունները.
1) որոշակի ուղորտներում երկուսի նպատակները համընկնում են, օրինակ՝
դատաիրավական համակարգի և արդարադատության կատարելագործ-
ման միջոցով այդ իրավահարաբերությունների մասնակիցների սուբյեկ-
տիվ իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պաշտպանե-
լը, 2) նրանց հիմնական սուբյեկտը պետությունն է, 3) իրավական քաղա-
քականության այս ձևերի իրականացման հիմնական միջոցը իրավական
ակտերն են: Իրավական քաղաքականության այս տարատեսակները տար-
բերվում են իրականացման ուղորտներով: Եթե դատաիրավական քաղաքա-
կանությունն ընդգրկում է դատաիրավական ողջ համակարգը իր ինստի-
տուցիոնալ, դատավարական, կազմակերպական և էթիկական տարրերով,
ապա դատավարական-իրավական քաղաքականության առարկան դա-
տավարական-իրավական կարգավորման կառուցակարգերի կատարելա-
գործման, դատավարական-իրավական միջոցների արդյունավետության
զննհատման չափանիշների մշակումն ու գործնական կիրառումն է:

Այսպիսով, դատաիրավական քաղաքականությունն ընդգրկում է ողջ
դատաիրավական համակարգը՝ դատական իշխանության կազմակերպ-
ման և գործունեության ուղորտները, դատական իշխանության մարմինների
հետ սերտ գործառնական կապ ունեցող և արդարադատության իրակա-
նացմանը աջակցող մարմինների գործունեության ուղորտը (դատախազու-
թյուն, ոստիկանություն և այլն): Դատաիրավական քաղաքականությունը
ունի չորս բաղադրատարր՝ 1) ինստիտուցիոնալ, որը ենթադրում է կատա-
րելագործել դատական համակարգի և դրա հետ կապված այլ մարմինների
կառուցվածքը, 2) դատավարական, որը ենթադրում է կատարելագործել
դատական իշխանության իրականացման դատավարական միջոցները, 3)
նյութաիրավական, որն ընդգրկում է նյութական իրավունքի ճյուղերի կա-
տարելագործման ուղորտը, 4) էթիկական, որը ենթադրում է կատարելագոր-
ծել համապատասխան պաշտոնատար անձանց վարքագծի կանոնները:
Մինչդեռ դատավարական-իրավական քաղաքականությունն ընդգրկում է
դատավարական կարգավորման կառուցակարգերի, մասնավորապես՝ դա-
տավարական – իրավական միջոցների կատարելագործման ուղորտը:

¹⁹ Стен **Майдан** И. А. նշվ. աշխ., էջ 24:

Դատաիրավական և դատավարական - իրավական քաղաքականության՝ որպես ամբողջի և մասի հարաբերակցությունն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Բանն այն է, որ դատաիրավական բարեփոխումների ընթացքում պետք է հստակ տարբերակել դատաիրավական քաղաքականության նշված բաղադրատարրերը, ինչը ենթադրում է հստակ զանազանել այդ քաղաքականության գաղափարախոսությունը կամ հիմնարար դրույթները ձևավորող ինստիտուտները: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխություններից հետո սկսված դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի ժամանակ դատաիրավական քաղաքականության դատավարական-իրավական ու ինստիտուցիոնալ բաղադրատարրերը հստակ չտարբերակելու հետևանքով տեղի է ունեցել համապատասխան օրենսդրական ակտերի կարգավորման առարկաների շփոթություն: Այսպես, դատաիրավական բարեփոխումների իրականացման նպատակով ՀՀ Նախագահի կողմից ստեղծվել էր դատաիրավական բարեփոխումների աշխատանքային խումբ, որն իր գործունեության ընթացքում քննարկել է ոչ միայն ինստիտուցիոնալ (դատարանակազմական) բնույթի, այլև դատավարական նշանակության մի շարք սկզբունքային հարցեր (օրինակ՝ քրեական հետապնդում հարուցելու հասկացությունը և այլն): Սակայն հետագայում ՀՀ Նախագահի 2006 թ. դեկտեմբերի 26-ի կարգադրությամբ ստեղծվել է նաև քրեական դատավարության օրենսգիրքը մշակող աշխատանքային խումբ, որի խնդիրն էր քննարկել բացառապես քրեադատավարական ոլորտի բարեփոխումների հարցը: Այս պարագայում այս երկու աշխատանքային խմբերի իրավասությունների տարանջատման, դատավարական հարցերի վերաբերյալ դատաիրավական բարեփոխումների աշխատանքային խմբի ընդունած որոշումների պարտադիրության հետ կապված խնդիր է ծագում:

Իրավաբանական հանրությունը հաճախ է քննարկում այն հարցը, թե ՀՀ դատական օրենսգրքում, որի նախագիծը քննարկել է նաև դատաիրավական բարեփոխումների աշխատանքային խումբը, թույլատրելի⁶ է դատավարական բնույթի նորմերի ամրագրումը: Դատարանների նախագահների խորհուրդը 2006 թ. փետրվարի 21-ի թիվ 92 որոշմամբ հավանություն է տվել «ՀՀ դատական համակարգի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նախագծին» և այն ներկայացրել է ՀՀ կառավարություն: Ծրագրի նախագծում նշվում է. «Միջոցառումների ստվար զանգվածը պահանջում է կողիֆիկացված օրենսդրական միջամտություն: Այսպես, անհրաժեշտ է մշակել մեկ միասնական ՀՀ դատական օրենսգիրք, որը կարող է փոխարինել այսօրվա գործող, սակայն արդիականությունը կորցրած «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «Արդարադատության խորհրդի մասին» և մի շարք այլ օրենքների»: Մի շարք իրավաբաններ, հիմք ընդունելով դատական օրենսդրության կողիֆիկացիայի ոլորտը, նշում են, որ դատական օրենսգիրքը պետք է սահմանի միայն դատարանակազմական հարաբերություններ, իսկ այնպիսի հարցերի կարգավորումը, ինչպիսիք են դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը, դրանց բողոքարկումը, դատական սանկցիաները և այլն, պետք է կարգավորվեն դատավարական օրենսդրությամբ: Այս առումով, կարծում ենք, որ, իրոք, ՀՀ դատական օրենսգրքի խնդիրը առավելապես դատարանակազմական հարաբերություններ կարգավորելն է, իսկ ՀՀ դատական օրենս-

գրքի 47 (վերաքննության սահմանները փաստի հարցում) և 91 հոդվածները (դատավորի ինքնաբացարակ) բովանդակում են դատավարական նորմեր, որոնք պետք է արտացոլվեն ոչ թե ՀՀ դատական, այլ դատավարական օրենսգրքում: Միևնույն ժամանակ չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ և դատավարական ու դատարանակազմական հարաբերությունների միջև անցկացնել անջրպետ: Կարծում ենք, որ շատ դեպքերում դատարանակազմական և դատավարական հարաբերություններն այնքան փոխկապված են, որ հնարավոր չէ դրանք հստակ տարանջատել, ուստի և հնարավոր չէ հստակ սահմանագիծ անցկացնել ՀՀ դատական օրենսգրքի և դատավարական օրենսդրության կարգավորման առարկաների միջև: Օրինակ, կարծում ենք, որ դատական ակտերի բողոքարկումը կամ դրանց ուժի մեջ մտնելը, դատական սանկցիաները՝ որպես դատարանի բնականոն գործունեությունն ապահովող իրավական գործիքներ, միանշանակորեն չի կարելի համարել դատավարական բնույթի նորմեր և պնդել, որ դրանք պետք է սահմանվեն ոչ թե ՀՀ դատական օրենսգրքով, այլ բացառապես դատավարական օրենսգրքով²⁰:

Դատաիրավական քաղաքականությունը հիմնված է որոշակի սկզբունքների վրա, որոնցով էլ հաճախ պայմանավորվում են քաղաքականության առաջնահերթությունները: Դատաիրավական քաղաքականության սկզբունքները սեղմ կերպով արտահայտում են դատաիրավական ոլորտում իրավական քաղաքականության իրականացմանն ուղղված պետության գործունեության բովանդակությունը: Տեսության մեջ վիճելի է իրավական քաղաքականության սկզբունքների համակարգի հարցը: Որոշ հեղինակներ առանձնացնում են իրավական քաղաքականության հետևյալ սկզբունքները. 1) իրավունքի ընդհանուր սկզբունքների հետ կապվածությունը, 2) գիտական հիմնավորվածությունը, 3) ժողովրդավարական հասարակության սկզբունքների համապատասխանությունը, 4) մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչների համապատասխանությունը, 5) ռեալիզմը²¹: Ն. Մատուզովը առանձնացնում է իրավական քաղաքականության սոցիալական պայմանավորվածության, գիտական հիմնավորվածության, կայունության և կանխատեսելիության, լեգիտիմ և բարոյական բնույթի, հրապարակայնության, անձի և պետության շահերի զուգակցման, մարդու իրավունքների առաջնայնության, միջազգային չափորոշիչների համապատասխանության սկզբունքները²²: Իրավական քաղաքականության նշված սկզբունքները վերաբերում են նաև դատաիրավական քաղաքականությանը: Տեսության մեջ որպես դատաիրավական քաղաքականության սկզբունքներ նշվում են օրինականությունը, իրավական կարգավորման միջազգային չափորոշիչներին համապատասխանելը, դատաիրավական քաղաքականության սոցիալ-քաղաքական և գործնական պայմանավորվածությունը, հասարակության բարոյաարժեքային դիրքորոշումները

²⁰ Մանրամասն տե՛ս **Դամբարյան Ա.**, Դատական օրենսգրքի վերլուծությունը օրենսդրական տեխնիկայի կանոնների լույսի ներքո, «Դատական իշխանություն», 2008, թիվ 10/111, էջ 12-17:

²¹ Տե՛ս **Путило Н.** Правовая политика современного демократического государства. В кн.: Социология права. М., 2002, էջ 137:

²² Տե՛ս **Матузов Н.** Правовая политика: сущность, концепция, реальность, էջ 81:

և մշակութային ավանդույթները հաշվի առնելը, դատաիրավական քաղաքականության հրապարակայնությունը, նպատակաուղղվածությունը, իրատեսականությունը, գիտական հիմնավորվածությունը և այլն²³:

Դատաիրավական քաղաքականության արդյունավետության ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում են դատաիրավական քաղաքականության իրատեսականության և գիտական հիմնավորվածության սկզբունքները:

Իրավական քաղաքականության գիտական հիմնավորվածությունը դիտվում է և՛ որպես իրավական քաղաքականության սկզբունք, և՛ որպես որակական հատկանիշ²⁴: Դատաիրավական քաղաքականության գիտական հիմնավորվածության բացակայության դեպքում իրավաստեղծ, իրավակիրառ ոլորտում պարզապես կունենանք միջոցառումների շարք, որը չի կարող կազմել միասնական համակարգ, ինչը չի հանգեցնի դրական արդյունքի: Դատաիրավական քաղաքականությունը պետք է ապացուցի, որ իրավական ներգործության այս կամ այն ձևը դատաիրավական համակարգում որոշակի սոցիալական նպատակի հասնելու առավել համարժեք միջոց է: Առանց գիտական բաղադրատարրի այդպիսի վերլուծությունը հնարավոր չէ: Օրինակ՝ դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլում ստեղծվեցին մասնագիտացված քրեական և քաղաքացիական դատարաններ: Անկասկած, արդարադատության և դատական իշխանության զարգացման ժամանակակից միտումներից է դատարանների և դատական համակարգի մասնագիտացումը²⁵: Այս իմաստով արդարադատության արդյունավետ իրականացումը պայմանավորված է դատական մասնագիտացման սկզբունքով: Սակայն անհրաժեշտ է քննարկել, թե քրեական և քաղաքացիական մասնագիտացված դատարանների ստեղծման ժամանակ դատաիրավական քաղաքականությունը մշակող սուբյեկտները գիտականորեն հիմնավորված ինչ չափանիշների հիման վրա են այդ դատարանները որակել մասնագիտական:

Տեսության մեջ նշվում է, որ դատական համակարգում մասնագիտացված դատարանների ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորվում է հետևյալ հանգամանքներով. 1) առկա է իրավաբանական գործերի մեծ քանակ, որոնց առանձնահատկությունները պահանջում են նորմատիվ իրավական ակտերի հատուկ ուսումնասիրություն, 2) վիճելի իրավահարաբերության ճյուղային առանձնահատկությունները թելադրում են դատավարական ձևի տարբերակում, 3) պետությունը տիրապետում է անհրաժեշտ նյութատեխնիկական և կազմակերպական միջոցների²⁶:

²³ Տե՛ս **Киреев А. Б.** Судебно-правовая политика в современной России: Проблемы теории и практики. Автореф. дисс. канд. юрид. наук. Тамбов, 2009, էջ 13:

²⁴ Տե՛ս **Рудковский В. А.** О принципах правовой политики // Правовая политика и правовая жизнь, 2003, № 4, էջ 7:

²⁵ Տե՛ս «Оптимизация гражданского правосудия России». Под ред. В. В. Яркова. М., 2007, էջ 59:

²⁶ Տե՛ս **Романец Ю. В.** Специализация в судебной деятельности как средство повышения эффективности правосудия. Проблемы защиты прав и законных интересов граждан и организаций. Материалы международной научно-практической конференции. Краснодар, 2002, էջ 67:

Մասնագիտացված դատարանների ստեղծման գործում անհրաժեշտ է սահմանել այս կամ այն գործերի քննության հատուկ կարգ: Մասնագիտացված դատարանների կառուցվածքի անկյունաքարը ընդհանուր կարգից տարբերվող ընթացակարգով գործերի քննության առանձնացումն է: Կարելի է ասել, որ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում գործերի քննության դատավարական կանոնների տարբերության բացակայության պայմաններում ընդհանուր առմամբ վերանում է հատուկ իրավասության դատարանների անհրաժեշտությունը:

Այսպիսով, դատարանները կարող են որակվել որպես մասնագիտացված, եթե քննում են հատուկ բնույթի իրավաբանական գործեր, որոնց քննության դատավարական ձևը տարբերակված է գործերի քննության ընդհանուր ձևից (օրինակ՝ վարչական դատարանը): Նշված չափանիշների միջև անջրպետ չկա, քանի որ մի շարք դեպքերում դատարանները մասնագիտացվում են գործերի բնույթի և այդ գործերի քննության կարգի առանձնահատկությունների հիման վրա:

ՀՀ-ում քրեական և քաղաքացիական դատարանները կարելի⁶ է արդյոք համարել մասնագիտացված դատարաններ: Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ բնույթի գործեր են քննում այդ դատարանները, և արդյոք դրանց կողմից քննվող գործերը իրենց դատավարական ձևի տեսանկյունից տարբերվում են գործերի քննության ընդհանուր դատավարական ձևից:

Մինչև 2009 թ. փետրվարի 5-ի՝ «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվածում սահմանվում էր, որ ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը՝ բացառությամբ քաղաքացիական, քրեական և վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի: Ընդհանուր իրավասության դատարանը քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ: Քրեական դատավարության ոլորտում ընդհանուր իրավասության դատարանները քննում էին միայն ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործեր, իսկ քրեական դատարանները՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործեր: Արդյոք այս չափանիշով քրեական դատարանների առանձնացումը կարելի⁶ է համարել դատարանի մասնագիտացում: Նախ նշենք, որ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության և ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը քննվում են նույն դատավարական ձևի շրջանակներում, ուստի հանցագործությունների դասակարգման այս հիմքով դատավարական ձևի տարբերակումը բացակայում է: Բացի այդ՝ հանրային վտանգավորության տեսանկյունից հանցագործությունների քառանդամ դասակարգումը չի արտահայտում հանցագործությունների բնույթների միջև եղած տարբերությունները, ուստի այն չի կարող համարվել նաև դատարանների մասնագիտացման առարկայական (նյութաիրավական) չափանիշ:

Ասվածը վերաբերում է նաև քաղաքացիական դատարաններին՝ բացառությամբ սնանկացման գործերի վարման դեպքի, քանի որ դրանց բնույթը և քննության դատավարական ձևը էականորեն տարբերվում են ընդհանուր կարգից:

Քրեական և քաղաքացիական դատարանները օրենսդրի կողմից որպես մասնագիտացված դատարան դիտարկելը չէր բխում դատարանների մասնագիտացման առարկայական և դատավարական չափանիշներից: Ուստի կարծում ենք՝ վերը նշված հանցագործությունների դասակարգման կամ հայցագնի չափանիշներից ելնելով, ընդհանուր իրավասության դատարանների և քրեական ու քաղաքացիական դատարանների միջև կատարվել է աշխատանքի պարզ բաժանում, ինչը որևէ եզր չունի դատարանների մասնագիտացման գիտական հիմքերի հետ: Այս առումով դատարանների, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանների միջև աշխատանքի բաժանումը պետք է սահմանազատել դատարանների մասնագիտացումից:

Միևնույն ժամանակ, կարծում ենք՝ դատաիրավական քաղաքականության կանխատեսելիության և գիտական հիմնավորվածության սկզբունքը պահանջում է լուրջ վերլուծության ենթարկել նաև քրեական և քաղաքացիական դատարանների վերացման վերաբերյալ մոտեցումը: Բանն այն է, որ դատաիրավական քաղաքականության գիտական հիմնավորվածությունը խախտվում է ոչ միայն այն դեպքում, երբ դատարանների միջև աշխատանքի պարզ բաժանումը դիտվում է որպես դատարանների մասնագիտացում, այլև երբ այս դատարանները վերացնելը պատճառաբանվում է պարզապես դրանց խիստ անհրաժեշտ լինելու վիճելիությամբ²⁷:

Այսպես, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008 թ. հոկտեմբերի 7-ի որոշմամբ դատական ղեկարտամենտին հանձնարարվել է մեկամսյա ժամկետում պատրաստել դատաիրավական բարեփոխումները տրամաբանական ավարտին հասցնելու հայեցակարգից բխող օրենսդրական նախագծերի փաթեթ: 2009 թ. փետրվարի 5-ի օրենսդրական փոփոխություններով վերացվել են քրեական և քաղաքացիական դատարանները, և որպես առաջին ատյանի դատարան գործում են ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը:

Դատարաններում գործերի քննության մասնագիտացումն ապահովելու նպատակով առաջարկվում է ընդհանուր իրավասության դատարաններում ներդնել մասնագիտացված դատավորների ինստիտուտը (մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատավոր, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատավոր, անչափահասների գործերով դատավոր²⁸ և այլն):

²⁷ Դատաիրավական բարեփոխումների՝ 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրում թեև նշվում է, որ դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի հայեցակարգը համահունչ է նաև ԵՄ-Հայաստան եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի պահանջներին, սակայն այդ փաստաթղթում չի քննարկվում, թե քրեական և քաղաքացիական դատարանների հիմնադրման ժամանակ ինչպիսի սխալներ են թույլ տրվել, որոնք պայմանավորեցին այդ դատարանների ոչ արդյունավետ գործունեությունը և դրանց վերացման անհրաժեշտությունը:

²⁸ Մի շարք երկրներում առկա են անչափահասների գործերով (յուվինալ) դատարաններ, սակայն ՀՀ դատական համակարգում անչափահասների գործերով դատավորների առանձնացումը չի տեղավորվում առաջին ատյանի դատավորների մասնագիտացման մեթոդաբանության մեջ: Բանն այն է, որ որպես դատավորների մասնագիտացման չափանիշ ընդունվել է առարկայական մասնագիտացումը (ըստ հանցագործությունների տեսակների), մինչդեռ անչափահասների գործերով դատավորի առանձնացումը որևէ առնչություն չունի առարկայական մասնագիտացման հետ:

Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրում սահմանվում է, որ առաջին ատյանի դատարանում գործերի բաշխումն ըստ մասնագիտացված քրեական և քաղաքացիական գործեր քննող դատավորների էականորեն կնվազեցնի դատական սխալները, կբարձրացնի մասնագիտացված դատավորների կողմից ընդունվող դատական ակտերի որակը:

Հարկ ենք համարում հիշեցնել, որ նախկինում փորձ արվել է ընդհանուր իրավասության դատարաններում գործերը բաշխել մասնագիտացման սկզբունքով: Այսպես, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թ. հունիսի 13-ի թիվ 97 որոշմամբ²⁹ սահմանվել են Երևան քաղաքի առաջին ատյանի դատարաններում, Շիրակի և Լոռու մարզերի առաջին ատյանի դատարանների կենտրոնական նստավայրերում գործերը մասնագիտացման սկզբունքով բաշխելու միանիզմները: Դատարանների նախագահների խորհրդի նշված որոշմամբ սահմանվել են դատավորների մասնագիտացման քրեաիրավական և քաղաքացիաիրավական ոլորտները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաիրավական քաղաքականության իրականացման ներկայիս փուլում նորից փորձ է արվում ներդնել մասնագիտացված դատավորների ինստիտուտը, քաղաքականություն ձևավորող սուբյեկտները դատաիրավական քաղաքականության գիտական հիմնավորվածության սկզբունքի պահպանման տեսանկյունից պետք է մանրամասն վերլուծեն վերը նշված որոշման հիման վրա գործերը մասնագիտացման սկզբունքով բաշխելու պրակտիկան, առանձնացնեն դրա դրական և բացասական կողմերը:

Բացի այդ՝ կարելի է հաշվի առնել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի թիվ 97 որոշման վերաբերյալ հետևյալ նկատառումները.

1. Որոշմամբ դատավորների մասնագիտացման ցանկում ներկայացվում էին դատավորների մասնագիտացման ոլորտները: Սակայն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումից անհասկանալի էր մնում, թե ինչ չափանիշների հիման վրա է որոշվել, թե որ դատավորը ինչ մասնագիտացում ունի: Կարծում ենք՝ այս հարցը դատական իշխանության ոլորտում կադրային ճիշտ քաղաքականություն իրականացնելու համար ունի սկզբունքային նշանակություն: Ուստի իրավական ակտերում պետք է սահմանել այն չափանիշները, որոնցով կարելի է որոշել տվյալ դատավորի մասնագիտացումը: Մասնագիտացված դատավորների թեկնածությունների ընտրության և մասնագիտացման որոշման ժամանակ կարող են հաշվի առնվել՝ բուհի մագիստրոսական կրթության ուղղվածությունը, տվյալ մասնագիտացմամբ ատենախոսության պաշտպանությունը, տվյալ ոլորտում գիտահետազոտական ծավալուն աշխատանքների իրականացումը կամ երկար տարիների պրակտիկ գործունեությունը և այլն:

2. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշման 2-րդ կետում նշվում է, որ մինչդատական վարույթի հետ կապված հարցերը քննարկում և լուծում են քաղաքացիաիրավական մասնագիտացման դատավորները: Նշված որոշումը թեև նպատակ է հետապնդում ապահովելու գործերի բաշխումը ըստ մասնագիտացման, սակայն, կարծում ենք, այդ տրամաբանությունը

²⁹ Նշված որոշումը ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 28 որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած:

խախտվում է, երբ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարցի լուծման իրավասությունը վերապահվում է քաղաքացիական մասնագիտացման դատավորներին:

Իրավական քաղաքականության իրատեսականության սկզբունքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հասարակությունը տառապում է ոչ միայն իրավունքի նիհիլիզմով, այլ նաև իդեալիզմով: Նման պարագայում իրավական քաղաքականության սուբյեկտների հռչակած որոշ նպատակներ և ծրագրեր կտրված են իրականությունից, չեն համապատասխանում առկա հնարավորություններին, ինչի հետևանքով մարդիկ մշտապես դեմ են առնում դատարկ խոստումների: Ըստ այդմ, իրավական քաղաքականության իրատեսականության սկզբունքը պահանջում է խնդիրների ու նպատակների առաջադրման ժամանակ և ծրագրերի մշակման ընթացքում հաշվի առնել դրանք իրականացնելու իրական հնարավորությունները³⁰:

Դատաիրավական քաղաքականության ձևավորման և իրականացման ընթացքում ևս հանդիպում են դեպքեր, երբ օրենսդրորեն ամրագրվում են իրականությունից հեռու այնպիսի պահանջներ, որոնք ի սկզբանե դատապարտված են որակվելու «մեռած նորմեր»: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 16 հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ դատական քննությունը որպես կանոն պետք է ավարտվի մեկ դատական նիստով: Գիշտ է, մեկ դատական նիստով գործն ավարտելու պահանջն ընդհանուր առմամբ բխում է արդարադատության արդյունավետության սկզբունքից, սակայն արդյո՞ք այս բարի ցանկության իրականացումը համապատասխանում է դատաիրավական քաղաքականության իրատեսականության սկզբունքին: Կարծում ենք՝ ո՛չ:

Նախ՝ մեկ դատական նիստով գործն ավարտելու մասին դրույթը ձևակերպված է ընդհանուր ձևով, ինչը նշանակում է, որ այն տարածվում է ոչ միայն քաղաքացիական և վարչական դատավարությունների, այլ նաև քրեական դատավարության վրա: Մինչդեռ քրեական դատավարությունում գործնականում դժվար է պատկերացնել, որ ընդհանուր կարգով դատաքննություն իրականացնելիս քրեական գործի քննությունն ավարտվի մեկ դատական նիստով: Բանն այն է, որ եթե նույնիսկ դատաքննությունն ավարտվի մեկ դատական նիստով, ապա պաշտպանական ճառի, ամբաստանյալի վերջին խոսքի իրավունքի ապահովման համար հաճախ պահանջվում է անցկացնել մի քանի դատական նիստ: Չէ՞ որ պաշտպանության կողմն իր ճառը, իսկ ամբաստանյալը վերջին խոսքը պատրաստելու համար պետք է բավարար ժամանակ ունենան, որպեսզի կարողանան վերլուծել դատարանում հետազոտված ապացույցները: Այս իրավունքի ապահովումը պահանջում է, որ դատարանը բավարարի պաշտպանության կողմի՝ ճառ կամ վերջին խոսք պատրաստելու համար ժամանակ տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը:

Երկրորդ՝ մեկ դատական նիստի պահանջն արտացոլված է Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում. այն ձևակերպված է որպես քաղաքացիական դատավարության սկզբունք: Այսպես, Նախարարների կոմիտեի՝

³⁰ Տե՛ս Демидов А. И. Реализм как принцип правовой политики // Правоведение, 1997, № 4, էջ 81:

«Դատական համակարգերի կատարելագործմանն ուղղված՝ քաղաքացիական դատավարության սկզբունքների մասին» R (84) 5 հանձնարարականում նշվում է, որ դատավարությունը, որպես կանոն, պետք է կազմված լինի երկու դատական միստից. առաջին միստի ժամանակ կարող են անցկացվել նախնական լուծմները, իսկ երկրորդ դատական միստում՝ հետազոտվել ապացույցներ, ներկայացվել կողմերի դիրքորոշումները, և, եթե հնարավոր է, կայացվի որոշում: Դատարանը պետք է ձեռնարկի միջոցներ, որպեսզի բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են երկրորդ դատական միստի համար, կատարվեն ժամանակին և առանց ձգձգումների:

Թեպետ քաղաքացիական դատավարությունում մեկ դատական միստի պահանջն ամրագրված է Եվրոպայի խորհրդի հանձնարարականներում, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ներկայումս նույնիսկ ՀՀ քաղաքացիական դատավարությունում այս պահանջը իրատեսական չէ: Որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ապահովելու մեկ դատական միստի պահանջը, օրենսդրությամբ պետք է նախատեսել համապատասխան կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան դատարանին արդյունավետ կերպով ապահովելու վկաների, կողմերի մասնակցությունը: Նախարարների կոմիտեի՝ վերոհիշյալ հանձնարարականում նշվում է, որ դատարանը պետք է հնարավորություն ունենա դատարան հրավիրելու վկաների, իսկ առանց հարգելի պատճառների նրանց չներկայանալու դեպքում պետք է կիրառի համապատասխան պատժամիջոցներ՝ տուգանք, վնասների հատուցում և այլն: Վկայի՝ դատարան չներկայանալու դեպքում դատարանը ինքնուրույն է որոշում շարունակել՝ դատաքննությունն առանց վկայի ցուցմունքները լսելու, թե՞ ոչ: Նույն հանձնարարականում նշվում է. «Վկաների ցուցմունքները լսելու կարգը պարզեցնելու նպատակով պետք է նախատեսել ժամանակակից տեխնիկական միջոցներ՝ հեռախոսակապ և այլն օգտագործելու հնարավորություն»: Թեև մեր օրենսդրությունն ընդունել է Եվրոպայի խորհրդի հանձնարարականներում ամրագրված մեկ դատական միստի պահանջը, սակայն օրենսդրությամբ նախատեսված չեն նույն Եվրոպայի խորհրդի հանձնարարականներում արտացոլված այն կառուցակարգերը (դատարան չներկայացած վկայի տուգանում, հեռախոսակապով հարցաքննություն և այլն)³¹, որոնք դատարանին հնարավորություն կտան գործը լուծելու մեկ դատական միստում, ուստի այդպիսի պահանջը դառնում է ոչ իրատեսական նաև քաղաքացիական դատավարությունում և չի համապատասխանում դատաիրավական քաղաքականության ռեալիզմի սկզբունքին³²:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել.

³¹ Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ դատակոչված վկաները չեն ներկայանում դատարան, որի հետևանքով դատարանը ստիպված է լինում հետաձգել դատաքննությունը: ՀՀ քաղ. դատ. օր.-ի 44 հոդվածի 5-րդ մասում նախատեսված է վկային հարկադիր բերման ենթարկելու հնարավորությունը: Կարծում ենք, որ գործող օրենսդրությունն անհրաժեշտ է համալրել այնպիսի իրավական գործիքներով, որոնց միջոցով հնարավոր կլինի առավել արդյունավետորեն ապահովելու վկայի մասնակցությունը:

³² Տե՛ս **Ղանդարյան Ա.**, Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքը դատական իրավունքում, «Դատական իշխանություն», 2008, թիվ 100-101, էջ 28-33:

1. Դատաիրավական քաղաքականությունը բնորոշվում է որպես պետական իշխանության մարմինների, ոչ պետական կազմակերպությունների, գիտական հիմնարկների կողմից իրականացվող դատաիրավական համակարգի վերաբերյալ միջազգային չափորոշիչներից բխող և գիտականորեն հիմնավորված գործունեություն, որն ուղղված է դատաիրավական ոլորտի իրավական գաղափարախոսության ձևավորմանը և դրա հիման վրա դատաիրավական համակարգի, մասնավորապես դատական իշխանության իրականացման դատավարական-իրավական միջոցների կատարելագործմանը և կիրառման արդյունավետության բարձրացմանը:

2. Դատաիրավական քաղաքականությունը ունի չորս բաղադրատարր՝ ինստիտուցիոնալ, դատավարական, նյութաիրավական և էթիկական: Մինչդեռ, դատավարական – իրավական քաղաքականությունն ընդգրկում է դատավարական կարգավորման կառուցակարգերի, մասնավորապես դատավարական – իրավական միջոցների կատարելագործման ոլորտը: Այլ կերպ ասած՝ դատավարական – իրավական քաղաքականությունը համարվում է դատաիրավական քաղաքականության բաղկացուցիչ մասը:

3. ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլում առանց լուրջ գիտական հիմնավորումների ներդրվեցին, այսպես կոչված, քրեական և քաղաքացիական մասնագիտացված դատարանները, որոնք մոտ մեկ տարի գործելուց հետո որակվեցին որպես ոչ արդյունավետ գործող դատարաններ և լուծարվեցին: Դատաիրավական բարեփոխումների իրականացման ներկայիս փուլում փորձ է արվում ներդնել մասնագիտացված դատավորների ինստիտուտը, ուստի դատաիրավական քաղաքականության գիտական հիմնավորվածության սկզբունքի պահպանման և հնարավոր սխալներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է մանրամասն վերլուծել գործերը դատավորների միջև մասնագիտացման սկզբունքով բաշխելու առկա պրակտիկան, դրա դրական և բացասական կողմերը:

4. Ընդհանուր իրավասության դատարանում գործերը մեկ դատական նիստով ավարտելու պահանջը դատաիրավական քաղաքականության իրատեսականության սկզբունքին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է դատավարական օրենսդրությամբ նախատեսել գործուն կառուցակարգեր (դատական նիստին չներկայացած վկային տուգանելը, վնասների հատուցում պահանջելը, հեռախոսակապով հարցաքննելը և այլն):

АРТУР ГАМБАРЯН - Судебно-правовая политика в Республике Армения (понятие и принципы). - В статье судебно-правовая политика рассматривается как разновидность правовой политики. Исходя из этого, автор в общих чертах представляет особенности и специфические черты правовой политики.

Автором проанализированы методологические основы соотношения таких понятий, как судебно-правовая политика, процессуальная политика и судебно-правовые реформы, дано определение собственно судебно-правовой политики.

Выделяются четыре составных элемента судебно-правовой по-

литики: институциональный, процессуальный, материально-правовой и этический, в то время как процессуально-правовая политика включает в себя механизмы процессуального регулирования, в частности сферу совершенствования процессуально-правовых средств. Иными словами, процессуально-правовая политика считается составной частью судебно-правовой политики. Субъекты судебно-правовой политики, как отмечается в статье, часто не разграничивают данные плоскости, в подтверждение чему приводится пример Судебного кодекса РА, основной задачей которого является регулирование отношений, связанных с судоустройством, в то время как в статье 47 кодекса (границы апелляции, касающиеся вопросов факта) и статья 91 (самоотвод судьи) содержатся процессуальные нормы, которые должны быть отражены в процессуальном законодательстве, а не в Судебном кодексе РА.

На втором этапе судебной реформы, проводимой в РА, без какого-либо серьезного научного обоснования в судебную систему были внедрены так называемые специализированные гражданские и уголовные суды, которые по прошествии одного года своей деятельности были признаны неэффективно действующими и расформированы. На нынешнем этапе осуществления судебно-правовой реформы, предпринимается попытка по внедрению института специализированных судей, в связи с чем автор предлагает субъектам формирования судебно-правовой политики детально проанализировать практику распределения дел между судьями согласно специализации. В свете принципов реализма и научности судебно-правовой политики автор обсуждает положение ст. 16 Судебного кодекса РА, согласно которому рассмотрение дел в судах первой инстанции, в общей сложности должно быть завершено в одном судебном заседании. Автор находит, что указанное положение отнюдь не вытекает из принципа реализма судебно-правовой политики, так как в законодательстве отсутствуют механизмы, которые предоставят возможность обеспечения присутствия на одном судебном заседании всех проходящих по делу свидетелей и тем самым сделают возможным завершение рассмотрения дела в одном судебном заседании.

ARTUR GHAMBARYAN - *Judicial-Legal Policy in the Republic of Armenia (The Concept and Principles)*. - This scientific study regards the judicial-legal policy as a type of legal policy and therefore demonstration of general description of the features and peculiarities of a judicial policy is pursued herein.

The author analyses the methodological bases of interrelation between the concepts of the 'judicial-legal policy', the 'procedural policy' and the 'judicial-legal reforms' and *a posteriori* provides the definition of the Judicial-Legal Policy.

The study marks out four elements of the judicial-legal policy: institutional, procedural, substantive, and ethical. Therewith the procedural-legal policy encompasses the sphere of improvement of the procedural regulation structures and particularly the procedural-legal mechanisms. In other words, the procedural-legal policy is a constituent of the judicial-legal policy.

The study indicates that the parties in judicial-legal policy often do not distinguish the given tiers of the policy. The Judicial Code of the Republic of Armenia can serve as an example of the aforementioned as it is called to regulate the relationship of judicial constitution, while its Article 47 (limits of appeal in a matter of fact) and Article 91 (self-recusation of a judge) deal with procedural norms, which should have been regulated by the Procedural Code, not the Judicial Code.

Furthermore, the study discusses in the light of the principles of realism and scientific content of the judicial-legal policy the stipulation of Article 16 of the Judicial Code of the Republic of Armenia which provides for the general requirement of trial completion at the courts of first instance in a single hearing. According to the author of this study the aforementioned provision does not correspond to the principle of realism of the judicial-legal policy, as the legislation does not provide for mechanisms which would allow participation in a single trial of all the witnesses involved in a case and, hence, completion of the trial in a single hearing.

Still, specialized criminal and civil courts were put in practice without proper scientific foundation during the second phase of the judicial-legal reforms carried out in the Republic of Armenia. However, after only one year of operation these courts were qualified as non-efficient and have been consequently liquidated. At the current stage of implementation of judicial-legal policy of incorporation of the institute of specialized judges is attempted; thus, in the view of the principle of upholding the scientific foundation, the author of this study puts forward to the policy makers to carefully analyze the practice of specialization-based distribution of legal cases among the judges in consideration of its advantages and disadvantages.

Lastly, the study discusses the issues of formation and implementation of strategy of the judicial-legal policy. Among the negative factors affecting the strategy of judicial-legal policy the author points out at the prevalence in these processes of narrow bureaucratic interests and lack of schools of diverse ideologies on procedural-science.